

ՕՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ

Posted on August 5, 2011 by Keghart



Category: [Opinions](#)



Կասիա Թոփուշեան, Պէյրուզ, 5 Օգոստոս 2011

✘ Առաջին այցելութիւնս դեպի հայրենիք բաւական հետաքրքրական ուղեւորութիւն մըն էր: Կարգ մը հայերու նման ունեցայ զգացումներու բուռն պահեր՝ յուզուեցայ, զուրաճացայ, նեղացայ, զայրացայ, հպարտացայ, եւ ամենէն կարեւորը զգացի հայրենիք վերադառնալու եւ ապրելու կարօտը:

Սակայն ըստ ինծի, ամենէն հետաքրքրական վայրկեանը այն պահն էր, երբ ես օդակայան կը մեկնէի Լիբանան վերադառնալու, այնտեղ ես բախտը ունեցայ հանդիպելու փոքր խաղալիքէ տուփիկի մը, որուն վրայ գրուած էր հետեւեալը՝ «Օդ Հայաստանի Օ2, պատրաստուած է Հայաստանում»:

Կասիա Թոփուշեան, Պէյրուզ, 5 Օգոստոս 2011

✘ Առաջին այցելութիւնս դեպի հայրենիք բաւական հետաքրքրական ուղեւորութիւն մըն էր: Կարգ մը հայերու նման ունեցայ զգացումներու բուռն պահեր՝ յուզուեցայ, զուրաճացայ, նեղացայ, զայրացայ, հպարտացայ, եւ ամենէն կարեւորը զգացի հայրենիք վերադառնալու եւ ապրելու կարօտը:

Սակայն ըստ ինծի, ամենէն հետաքրքրական վայրկեանը այն պահն էր, երբ ես օդակայան կը մեկնէի Լիբանան վերադառնալու, այնտեղ ես բախտը ունեցայ հանդիպելու փոքր խաղալիքէ տուփիկի մը, որուն վրայ գրուած էր հետեւեալը՝ «Օդ Հայաստանի Օ2, պատրաստուած է Հայաստանում»:

Այս տուփիկին վրայ նաեւ գրուած էր տուփիկին մէջը գտնուող պարունակութեան բաղադրութիւնը:

- Երեւանի օդ 20%
- Դիլիջանի լեռնային օդ 25%
- Սեւանայ Լճի գոլորշի (շոգի) 10%
- Հիւրընկալութեան ոգի 35%
- Լաւաշի հոտ 5%
- Հարեւանի խորովածի հոտ 5%

Իսկ այս բոլորին մէջ ամենէն հետաքրքրականը այս բաղադրութիւններու կիրարկումն էր, որը կ'ըսէր:

- Խորունկ շունչ առնել
- Կանոնաւոր կերպով շնչել Հայաստանի սահմաններէն դուրս գտնուելու ընթացքին:
- Շնչել հայրենիքի կարօտախտէն տառապելու ընթացքին:

Նման իսկական տուփիկի մը գաղափարի գոյութեան, վստահաբար փոքրերը պիտի հաւատային: Պիտի երագէին թէ նման հայրենիքի օդով լեցուած իսկական տուփիկ մը կայ տեղ մը, կամ նոյնիսկ մենք կարող ենք նման տուփիկ մը պատրաստել եւ լեցնել հայաստանի օդով:

Եթե միայն կարենայինք Երեւանի օդը գետեղել այդ փոքր տուփիկին մէջ պիտի յաջողէինք մեր հետ տանիլ այդ կտոր մը օդը աշխարհի որ ծայրն ալ որ երթայինք:



Երբ որ անհրաժեշտութիւնը զգայինք պիտի բանայինք այդ տուփիկը եւ շնչէինք այդ բուռ մը հողին օդը: Պիտի կշտանայինք, հարբենայինք եւ յագենայինք այդ օդով: Մեզմէ շատեր ուժ եւ կորով պիտի ստանային, որպէսզի շարունակեն իրենց առօրեան հայրենիքէ դուրս հողի մը վրայ, ուրիշներ պիտի շնչէին որպէսզի ստանան հայրենիք վերադառնալու յոյսը, իսկ տակաւին ուրիշներ պիտի շնչէին անընդհատ առանց գոհանալու եւ կշտանալու:

Ըստ շատ մը հայերու, Հայաստանի ջուրը եւ օդը կը գեղեցկացնէ եւ կը զուարթացնէ հայը, անոր կու տայ երազ, յոյս, եւ հաւատք: Ահա թէ ինչու, հայը ուր որ ալ ըլլայ, անպայման Հայաստան այցելողէ մը կը խնդրէ կտոր մը հող եւ կաթիլ մը ջուր:

Հայոց պատմութենէն բոլորիս ծանօթ է «Շապուհի եւ Արշակի» հողի եւ ջուրի հետ կապուած ավանդութիւնը, ուր Պարսիկներու Շապուհ Բ արքան կը փորձէ Հայոց Արշակ Բ թագաւորի մտադրութիւնները Հայաստան վերադարձնէ ետք: Շապուհ Հայաստանէն հող եւ ջուր բերել կու տայ եւ դահլիճին կեսը կը ծածկէ այդ հողով, իսկ միւս կեսը Պարսկական հողով, եւ Արշակի հետ կը սկսի ճեմել դահլիճին մէջ:

Ի զուր չէր Շապուհի այս փորձառկումը, որովհետեւ ամէն անգամ որ Արշակի ոտքը հայկական հողին դաչէր, Արշակ կը զօրանար, ակելի ինքնավստահ կը դառնար եւ կը մերժէր գործակցիլ թշնամիին հետ:

Նման պատմութիւններ լսելով հայ փոքրիկները իրենց մանուկ հասակէն կը սորվին հողին կարեւորութեան մասին եւ կը կառչին հողին:

Հայրենիքի անձրեւը, ձիւնը, հողը, պտուղը, կայծակը, ջուրը, հովը, օդը ... խորհրդաւոր իմաստ ունի իւրաքանչիւրիս համար: Այն ինչ որ օտար հողի վրայ անընդունելի եւ տարօրինակ է մեզի համար, յանկարծ ընդունելի կը դառնայ մայր հողի վրայ:

Ճիշդ է որ անկարող ենք հայաստանի օդը գետեղել տուփիկի մը մէջ, սակայն որովհետեւ հայը միշտ անկարելին եւ տարօրինակը կը փորձէ, ան կը յաջողի երազը իրականացնել իր հետ հայրենիքէն բուռ մը հող կամ ումբ մը ջուր բերելով:

Եւ ամէն անգամ, որ ան այդ ջուրէն խմէ կամ այդ հողին դաչի, ինքնաբերաբար կը զօրանայ եւ իր կեանքի հանդէպ ունեցած յռետեսութիւնը անմիջապէս կը փոխուի լաւատեսութեան:

Երանի թէ փոքրերուն երազը` Հայաստանի օդով տուփիկին հետ կապուած, իրականանայ եւ աշխարհի տարածքին գտնուող բոլոր այն մարդիկը, որոնք իրենց հայրենիքէն դուրս կ'ապրին, կարողանան իրենց հայրենիքէն օդ առնել եւ գետեղել փոքր տուփիկի մը մէջ, որպէսզի հայրենիքի օդով սնանին եւ հասակ առնեն:

Կասիա Թոփուլեան

